ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 դեկտեմբերի 2023 թվականի N 534 - Ա

«ՍՈՒՐԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱԹԵՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՈՐՎԱՐԴ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով և հիմք ընդունելով Նելլի Պետրոսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2023 թվականի դեկտեմբերի 26-ից լուծել «Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նորվարդ Մովսիսյանի հետ 2018 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված N 30 աշխատանքային պայմանագիրը:

2. 2023 թվականի դեկտեմբերի 26-ից «Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Նելլի Պետրոսյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 26
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290